ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ և ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. ՀՀ կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և 2016 թվականի գերակա խնդիրների համաձայն՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության մասով նախատեսված 3 գերակա խնդիրները և 7 միջոցառումներն իրականացվել են ամբողջությամբ:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2016 թվականի հունվար-նոյեմբերին գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը կազմել է 836.1 մլրդ դրամ, որը զիջում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 6.1 %-ով: Համախառն արտադրանքի կրճատումը հիմնականում պայմանավորված է բուսաբուծության համար անբարենպաստ բնակլիմայական պայմաններով (վաղ գարնանային ցրտահարություն, կարկտահարություն):

Հաշվետու տարում շարունակվել են դրական տեղաշարժերը հողային ռեսուրսների, մասնավորապես վարելահողերի օգտագործման բնագավառում: Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը 2016 թվականին կազմել է 81.9 %, 2015 թվականի 78.6%-ի դիմաց:

<u>Բուսաբուծություն</u>: 2016 թվականին գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները կազմել են 365.6 հազ. հա, նախորդ տարվա 351.3 հազ. հա-ի դիմաց: Ցանքատարածություններն ավելացել են 14.3 հազ. հա-ով: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2016 թվականի հունվար-նոյեմբերին բուսաբուծության համախառն արտադրանքը կազմել է 512.9 մլրդ դրամ, որը զիջում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 11.8 %-ով: Ըստ օպերատիվ տվյալների, հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի արտադրության ծավալը կազմել է 658.8 հազ. տոննա, որը գերազանցում է նախորդ տարվա մակարդակը 3.3 %-ով, այդ թվում ցորենի արտադրության ծավալը կազմել է 381.6 հազ. տոննա զիջելով նախորդ տարվա մակարդակը 0.5 %-ով: Պտղի և հատապտղի, խաղողի, բոստանային մշակաբույսերի արտադրությունը, ըստ օպերատիվ տվյալների, նվազել է համապատասխանաբար 29.7; 40.3 և 14.5 %-ով:

2016 թվականին շարունակվել են իրականացվել մի շարք ծրագրեր, որոնք ուղղվել են հանրապետության գյուղատնտեսության հողային ռեսուրսների նպատակային օգտագործման մակարդակի բարձրացմանը, հացահատիկային տնտեսության կայունացմանը, բարձրորակ սերմերով ապահովվածության մակարդակի բարձրացմանը, բույսերի պաշտպանությանը և այլն:

<u>Անասնաբուծություն</u>: 2016 թվականին արձանագրվել է անասնապահական մթերքների արտադրության որոշակի աճ: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2016 թվականի հունվար-նոյեմբերին անասնաբուծության արտադրանքի արժեքը կազմել է 323.3 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 4.3 %-ով: Ըստ օպերատիվ տվյալների, տարվա արդյունքներով մսի արտադրությունն ավելացել է 5.1, կաթինը՝ 3.5 և ձվինը՝ 13.7 %-ով:

Անասնաբուծության խթանմանը նպաստել են վերջին տարիներին իրականացվող մի շարք պետական ծրագրեր: Մասնավորապես, **«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության վարկային ծրագիրը», «Տավարաբուծության զարգացման ծրագիրը»:** Վերջինիս շրջանակներում 2016 թվականին Ավստրիայի Հանրապետությունից ներկրվել են 453 գլուխ հոլշտին և շվից ցեղերի տոհմային երինջներ, որոնք հատկացվել են թվով 16 տնտեսավարող սուբյեկտի: Եվրոպական երկրներից ներկրված տոհմային երինջների բազայի վրա ձևավորված տոհմային տնտեսություններում իրականացվող տոհմասելեկցիոն աշխատանքների շնորհիվ վաճառքի նպատակով իրականացվում է տոհմային երինջների աճեցում:

Նկատելի առաջընթաց է արձանագրվել **ձկնաբուծության** ոլորտում: 2016 թվականին ապրանքային ձկան արտադրության ծավալը կազմել է շուրջ 16.4 հազ. տոննա, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է 1.2 հազ. տոննայով կամ 7.9 %-ով: 2016 թվականին, ըստ օպերատիվ տվյալների, հանրապետությունից արտահանվել է ավելի քան 2.1 հազար տոննա ապրանքային ձուկ և ձկնամթերք:

<u>Գյուղատնտեսությունում կոոպերացիայի խթանում</u>: Նախարարության խորհրդատվական համակարգի միջոցով շարունակվել է աջակցությունը գյուղատնտեսական գործունեություն իրականացնող կոոպերատիվների ձևավորմանը և գործունեությանը: Մասնավորապես, նախարարության խորհրդատվական համակարգի միջոցով 2016 թվականին աջակցություն է ցուցաբերվել թվով 12 գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորմանը: «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» վարկային ծրագրի շրջանակներում 2016 թվականին հանրապետության 8 մարզում ստեղծվել է շուրջ 38 արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվ:

2. **<u>Գյուղատնտեսության ոլորտի մատչելի վարկավորում:</u>** Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կառավարության կողմից հաստատված **«Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման կարգին»** համապատասխան տրամադրվել են մատչելի տոկոսադրույքով (14 %-ով) վարկեր, որի 6 տոկոսային կետը սուբսիդավորվել է: 2011 թվականի ապրիլի սկզբից մինչև 2016 թվականի հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում գյուղատնտեսությունում տնտեսավարողներին տրամադրվել է 109.5 մլրդ դրամի 91.5 հազ. միավոր վարկ: Ընդհանուր առմամբ, վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 4.0 մլրդ դրամ, որից 2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին 895 մլն դրամ: 2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում տրամադրված վարկերի գումարը կազմել է շուրջ 15.0 մլրդ դրամ:

<u>Գյուղատնտեսությունում օգտագործվող ռեսուրսների մատչելիության բարձրացում:</u>

«Հողօգտագործողներին 2016 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության» ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել 32.0 հազ. տոննա ազոտական, 320.0 տոննա ֆոսֆորական և 840.0 տոննա կալիումական պարարտանյութեր: Պարարտանյութերը վաճառվել են շուկայականից 40-50 %-ով ցածր գներով: 2016 թվականի ընթացքում իրականացվել է նաև 2015 թվականի աշնանը չբաշխված 2594.3 տոննա ազոտական, 759 տոննա ֆոսֆորական և 734.5 տոննա կալիումական պարարտանյութի բաշխումը: Հաշվետու տարվա ընթացքում մարզերում իրացվել են շուրջ 31.7 հազ. տոննա ազոտական, 574.8 տոննա ֆոսֆորական, 1015.1 տոննա կալիումական պարարտանյութեր: Ամբողջությամբ բավարարվել է մարզերի պահանջարկը:

«Հողօգտագործողներին 2016 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության» ծրագրի շրջանակներում հանրապետության հողօգտագործողներին գյուղական համայնքներում նախատեսվել է հատկացնել դիզելային վառելանյութ, 1 լիտրը 280 դրամ՝ շուկայականից զգալի ցածր գնով, ներառյալ տեղափոխման ծախսերը: Հաշվետու տարվա ընթացքում մարզերում իրացվել է 5.0 մլն լիտր դիզելային վառելանյութ: Մարզերի պահանջարկն ամբողջությամբ բավարարվել է:

<u>Գյուղատնտեսական հումքի մթերում, իրացում</u>: 2016 թվականին գյուղատնտեսական մթերք վերամշակող թվով 39 ընկերությունների կողմից մթերվել է 60.1 հազ. տոննա պտուղբանջարեղեն, իսկ խաղող վերամշակող թվով 50 ընկերությունների կողմից մթերվել է 109.8 հազ. տոննա խաղող:

2016 թվականին արձանագրվել է թարմ բուսաբուծական մթերքների արտահանման ծավալների ավելացում: 2016 թվականին օպերատիվ տվյալներով հանրապետությունից արտահանվել է 141,9 հազ. տոննա պտուղբանջարեղեն, խաղող և կարտոֆիլ, այդ թվում՝ 93.1 հազ. տոննա պտուղ, որից՝ 19.5 հազ. տոննա ծիրան, 10.1 հազ. տոննա խնձոր, 9.6 հազ. տոննա դեղձ, 3.5 հազ. տոննա կեռաս, 1.7 հազ. տոննա տանձ, 41.3 հազ. տոննա խաղող, 47.3 հազ. տոննա բանջարեղեն և 1.6 հազ. տոննա կարտոֆիլ: Ընդհանուր առմամբ, արտահանման ծավալները գերազանցում են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 48.7 %-ով:

3. **<u>Գիտության և խորհրդատվության ոլորտներ</u>:** Նախարարության գիտական կազմակերպությունների կողմից հետազոտությունները շարունակվել են հիմնականում գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիայի, սերմնաբուծության, համաշխարհային հավաքածուներից և գյուղատնտեսական հետազոտությունների միջազգային կենտրոնների սելեկցիոն տնկարաններից ստացված սորտերի, հիբրիդների ու սելեկցիոն գծերի, ինչպես նաև ոչ ավանդական մշակաբույսերի փորձարկման ու սելեկցիոն նպատակներով օգտագործման ուղղությամբ:
Հաշվետու ժամանակահատվածում նախարարության գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնների կողմից կազմակերպվել և անցկացվել է 1079 սեմինար և 850 դաշտային ուսուցում, իրականացվել է 21.5 հազ. խորհրդատվական միջոցառում, 149 փորձացուցադրական աշխատանք, եթեր է հեռարձակվել 99 ռադիո-հեռուստահաղորդում: Տպագրվել և տարածվել է 450 անուն խորհրդատվական թերթիկ և գրքույկ՝ 122.0 հազ. ընդհանուր տպաքանակով: Թողարկվել է 158 համար թերթ՝ 211.7 հազ. ընդհանուր տպաքանակով:

<u>Վարկային ծրագրեր</u>

<u>«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» առաջին և երկրորդ ծրագրերի շրջանակներում 2016 թվականի ընթացքում կատարված հիմնական աշխատանքներ</u>

Առաջին ծրագրի Համայնքների արոտավայրերի և անասնապահության կառավարման համակարգ բաղադրիչի շրջանակներում հաշվետու տարում մասնավորապես կատարվել են հետևյալ աշխատանքները՝ ՀՀ 6 մարզի (Արագածոտն, Լոռի, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք) ծրագրով նախատեսված 55 համայնքի փոխարեն աշխատանքներ են իրականացվում լրացուցիչ ևս 26 համայնքում, 2 համայնքում իրականացվել են արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքներ (կառուցվել է 11.1 կմ ջրագիծ, տեղակայվել է 5 հատ խմոց), 12 համայնքի արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է շուրջ 28 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում 4 միավոր տրակտոր և 24 միավոր այլ գյուղգործիքներ:

Երկրորդ ծրագրի համանուն բաղադրիչով 2016թ. կատարվել է հետևյալ աշխատանքները՝ ընդգրկվել է ՀՀ 8 մարզի (Արագածոտն, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Շիրակ, Սյունիք, Վայոց ձոր, Տավուշ) նախատեսված 100 համայնքի փոխարեն 113 համայնք, 38 համայնքում հիմնադրվել են «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ, 32 համայնքում արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքներն ավարտվել են (94 կմ ջրագիծ, 31 հատ խմոց), 8 համայնքում արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները գտնվում են իրականացման փուլում (44.7 կմ ջրագիծ, 21 հատ խմոց), 48 համայնքի արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է շուրջ 300 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում 47 անիվավոր տրակտոր և 253 միավոր այլ գյուղգործիք: Ծրագրերի շրջանակներում աշխատանքներ են իրականացվել նաև «Գյուղատնտեսությանն աջակցող ծառայությունների հզորացում», «Մրցակցային դրամաշնորհների ծրագիր», «Արժեշղթայի զարգացում» բաղադրիչներով:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության 2016 թվականի գործունեությունն ուղղված է եղել ոլորտի գերակա ուղղություններով համապատասխան աշխատանքների իրականացմանը, ընթացիկ հիմնախնդիրների լուծմանը: